

Հարեցանում: Այստեղ ազգային վերածնութիւն գեռ հնարաւոր է: Աւետարանական առաքելութիւնն այդպիսի ազգային վերածնութիւն չպէտք է խափանէ, եթէ նոյն իսկ ինքը յաջողութիւն ունենայ, որովհետև այդպիսով բաժանումներ է ձգում ժողովրդի մէջ: Կրա իսկակարիչ ազգեցութիւնը պահան չենակ այն ժամանակի, երբ աշխատակին ապարդիւն է մնում: որովհետև ազգային քրիստոնեան հետ կապուած բոլոր թերութիւնները, նոր առաքելութեան դէմ եղած հակառակութեան շնորհիւ՝ դառնում են իրեւ նուիրական և պահպանութեան արժանի: Իմ կարծիքով քրիստոնէական եղայրսիրութիւնից բղասած մի արդիւնաւոր ծառայութիւն կարելի է մատուցանել այս «քրիստոնեայ» ժողովուրդներին նրանով միայն որ կարուզանային ազգային կրթութեան պահանջների համաձայն նպաստել ժողովրդի բարձրացման և նախապաշտումների ոչնչացնելուն: Խոկ ինչ վերաբերում է Հայերին, եթէ թուրքերը մոյլ տան որ այդ ժողովուրդն ապրի, այդպիսի ազգային վերածնութիւն այլ ևս հեռու հորիզոնի վերայ բարձրացող մի կարելութիւն չեն միայն, Ամբողջ ժողովրդի կրթութեան աստիճանն այստեղ շատ աւելի բարձր է կանգնած, քան Հարեցներինը. մինչեւ անգամ՝ այստեղ գործում են իսկապէս զարգացած աստուածաբաններ, և դոցա հաշլում նաև այնպիսիները, որոնց գերմանացի պրոֆեսորներ սիրով յիշում են՝ իրեւ իրենց ընդունակ և խիստ յարգելի աշակերտների:

Աւստի չպէտք է Հայերին քրիստոնեայ հաբեշների հետ մի աստիճանի վերայ դնել, Միմեաց կողքին գնելն այն միտքն ունի, թէ ինչ որ Հայերի համար յուսալ իրաւացի է, այդ հարեշների համար ևս բոլորովին անկարենի փափագ չպէտք է համարուի:

Այդպիսի ցանկութեանց կատարումն ի հարկէ խիստ կրթուարանայ, եթէ Եւրոպայի քրիստոնեայ ազգերը շարունակեն այդ ժողովուրդների վերայ բացառապէս իրեւ կուռափանծորների և իրենց իշխանութիւնը արևելքում ընդարձակելու միջոցների վերայ նայել, Քանի ատուում են այն բարբարոսական խստութեան դէմ, որով այդ քրիստոնեաները պաշտպանում են իրենց ազգային սեպհականութիւնը, իրենց ազգի յօյսերը, Երգարև դա առանց հիմունքի չէ: Բայց եթէ մէկը մտածէ, թէ ինչքան նոքա քիչ և Եւրոպայի ժողովուրդները շատ են ստացել (համ, Առևկ-Ժի 48), այն ժամանակ թշլ չե կարելի տալ մտածելու, որ նոցա առաջում գերան կայ, իսկ Եւրոպայի քրիստոնեայ ժողովուրդների աշքում շիւլ:

ԿՐԿԻՆ ՅՆ ՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ  
ԵՒ ՄԻՒԹԱՐՆԱՆ ՀԱՅՐԵՐԸ.

Խնդիր անցեալ անգամ՝ յայտնեցինք, այս նիւթին վերաբերեալ մեր յօդուածն Արարատի ազրիլ հում արժանացել է շատ ընդարձակ պատասխանի, որ ներկայացնում է 20 երեսից բաղկացած մի առանձին տետր Միսիթարեանց գատի պաշտպանը այս անգամ չացունու փոխարէն Շիրակացին է, ասել է թէ Վենետիկի միարանութիւնը իւր մատեան զոնդն է տակարէկ հրաւիրել՝ անշուշտ այդ դատին շատ մեծ նշանակութիւն տալուց: Դժբաղգար մեր ընթերցողների մեծագոյն մասը միջոց չունի երեկի Բազմալէպն և իւր այդ վերջին հրատարակութիւնը կարդալու արժէր կարդալ՝ թէ կուզ մեծահռչակ միարանութեան արդի վիճակի ու բռնած ուղղութեան մասին մի գաղափար կազմելու համար: Բայց գոնէ նոքա, որոնք կարգում են և որոնց փոքրի շատէ ծանօթ է Շիրակացին իւր նըմանը չտեսնուած զրուածքներով, կհասկանան, թէ ինչ ասել է նորա հետ վէճի բռնուել՝ վիճել մի մոլոր հետ որ տրամարանութեան և բարյագիտութեան տարբեր կանոններով է առաջնորդուում: Քան սովորական մահկանաց ցուներս որի զրիշը ոչ մի տեղ կանգ չի առնում: Որ ամենածանր անձնական վիրաւորանքներ է հասցնում՝ առանց գուցէ զգալու իւր արածը ամրիսնի վրայից է խօսում ձեզ հետ՝ պատմութեան զասեր տալով իրեւ մի հասարակ դպրոցականի, թէ պէտք է մինչեւ այսօր այն ամենահասարակ բանը չի իմացել օրինակ: Որ հարեշները միարնակ են և ոչ նեստորական:

Մահորդ յօդուածում մենք տշխատել եինք որքան կարելի է մեզմ լեզու զործ դնել խոյս տալ անտեղի վիճարանութիւնից և մեր առաջ զրած խնդիրը միայն պարզաբանելով զուտ պատմական տեսակետից՝ անուշադիր թօղնելով հակառակորդի անվայիկ յարձակողական ոճը և

կողմանակի ոտնձգութիւնները: Բայց մեր նոր ախոյեանը բոլորովին հակառակ ընթացք է բռնում: Իւր ճառը սկսում է նա մի մեզադրանքով իրեւ թէ «ապրիներ» յառաջ իսկ Արարատ իրեն կէտ նպասակի զբած էր արդէն յարձակողական կերպով կրօնական խնդիրներ յուզել հակամամիթարեան հոսանք մի յառաջ բերելու համար: և մենք շարունակում ենք այն շահագետ աշխարհիկ պարունայց գործը որոնք Արարատին այդ ուղղութիւնն են տուել—Այդպիսի զրախօսութիւններով զբազուելու մենք ի հարկ է ախորժակ չունինք: Կամենայինք միայն ապահովեցնել Շիրակացուն եւ իւր միաբանակիցներին, որ մեր զարդարարը յամենայն գեպս այնքան բարձր չէ նոյցա միաբանութեան մասին և մենք վերջինիս այնպիսի մեծ զօրութիւն չենք փերազում, որպէս զի նորա գէմ հալածանք հանելու հարկ տեսնէինք: Մեզ հետ միասին ամեն ոք, ով անձամբ գտնուել է վենաշիկում: Կամ լաւ ծանօթ է Մինիթարեանց փերջին ժամանակի գործունեութեան՝ կվկայէ, որ Վենետիկի միաբանութիւնը շատ յետ է մնացել ժամանակից և գժբազզարար հետզետէ: Կորցնում է իւր նախկին մեծ նշանակութիւնը մեր զբականութեան համար: Հեռու գտնուելով լուսաւորութեան մեծ կեղծոններից և շատ փակ կեանք վարելով, նա զրեթէ չի ենթարկուում: Ժամանակակից զիտութեան, մանաւանդ հսկայական քայլերով առաջ գնացող պատմագիտութեան՝ ազգեցութեանը: Նոր սերունդը դաստիարակուում է այստեղ հսկման: Հին եղանակով, առանց զբափ թարմ մարդոց հետ շփուելու, և այսպէս յառաջ են գտնիս երիտասարդ ուժեր, որոնք շատ եռանդ ունին: ձգտում նաև նոր հովերով առանձնելու, բայց թեկերը կապած են: Կարգում են թէ և նոր զրբեր, բայց արգէն մի անդամ ձեռք բերած ակնոցներով: բարձրագոյն կրթութեան մմնութառում չեն զարդանում՝ զուտ զիտութիւն և զիտական մեջով մատակարարող ուսուցափեանների ձեռքի առկի առկի, այլ իրեւ ինքնուսների ուսափ և փարակուած բոլոր ինքնուսներին յասուկ անձնապատճանութեամբ: Այս

պիսի մի նոր սերունդի ամենանշանաւոր ներկայացուցիչն է ահա Շիրակացին. մենք նորան յարդում ենք իրեւ խիստ եռանդուն, չափից գործ աշխատասէր և գործունեայ ճակատավ մարդու, և կշարունակենք յարգել հակառակ իւր բոլոր թշնամններին, բայց աւելի ուրախ կլինէինք, եթէ մեր գործը նորա հիտ չընկնէր: Ինչքան աւելի ախորժելի էր մեզ պատմական խնդիրների վերայ օր: Հայր Ժաշեանի հետ վէճ ունենալ: Վենեսեակցիք իրեւ աւանդապահ, բուն հայկական ծէսերի և սովորութիւնների պահպանութեան համար աւելի նախանձախնդիր քան նոյն իսկ մենք խակական հայերս, մեր և իւրաքանչիւր հայի համակրութիւնն իրենց կողմն ունին միշտ բայց չկարելի չխոստովանել: որ վիեննացիք վերջին ժամանակներս աւելի առաջ են գնացել: Վիեննայի պէս մի առաջնակարգ մայրաքաղաքում գտնուելով և յարաբերութիւն պահելով՝ նորանշանաւոր համալսարանի հետ՝ սոքա աւելի յարամարութիւն ունին բարձրագոյն զիտութիւն ձեռք բերելու, և օգուտ են քաղում այդ յարամարութիւնից: Եթէ Շիրակացին թոյլ կտայ մեզ մի անկեղծ բարեկամական խորհուրդ տալ այդ այն կլինի, որ փոխանակ մեր մէջ եղած դատը քննող մի յանձնաժողով կազմելու համար մի ըաւական գումար առաջարկելու, աշխատէ այդ գումարը յատկացնել տալ իւր միաբանութիւնից մի քանի ընդունակ երիտասարդների եւրոպական զիտութեան զիսաւոր կեդրոններն ու զարկելու: այդպիսով թէ մեր դատը շատ աւելի հշշտութեամբ կարելի կլինի վերջացնել և թէ Վենեսեակի միաբանութիւնը կարողանայ իւր դիբը պահպանել: որ նա պղապէս հետզետէ կկորցնէ անշուշտ:

Մի ուրիշ կետ որ բացառութեան կարօս է և որ զիսաւոր արգելքն է մեր և Միփթարեանների մէջ իրար խօսք հասկանալու այդ նոցա մաքերի վերայ բռնացող այն ողին է, որ մենք ընդհանուր բառով կաթովիկութիւն ենք անուանել կաթովիկութիւն ներկայ դեպքում ի հարկ է նեղ մոքով առաջ՝ իրրեկրթութեան այն եղանակից որ Յիսուսնեան

կրօնաւորների գաղլոցից ելնելով՝ տիբապետող  
է դարձել այժմ ամբողջ կաթոլիկ աշխարհ  
հում և զօրեղ ազգեցութիւն է գործում  
դժբաղբաբար նաև Միսիթարեանների վերայ:  
Շիրակացին վիրաւորուած է երեւում մեր  
խօսքից, թէ այդ կաթոլիկութիւնը ընդունակ  
է գարձնում մարդոց սեր սպիտակ տեսնելու,  
և հակասական է համարում ու ծաղրում  
մեր անկեղծ բարեկամական ջատագովութիւնը  
Միսիթարեանների համար, թէ նոքա յիշաւ  
տակարաններ չեն կեղծել, այլ իւրեանց տար-  
րօրինակ տեսութիւնները կաթոլիկական ոգու  
ազգեցութեան ներքոյ են աշխարհ հանել:  
Բայց որ այստեղ ոչ մի հակասութիւն չկայ և  
բոլորովին տարբեր բան է իւր ստացած կրթու-  
թեան շնորհիւ, յակամայից, սեր սպիտակ  
տեսնել և տարբեր՝ տեսածը զիտակցարար  
կեղծել այդ մենք ուրիշներին բացատրելու  
հարկ չունինք. միայն այսքանը կիրկնենք, որ  
եթէ կաթոլիկութիւնը ի նկատի չունենայինք,  
բացատրել և արդարացնել չենք կարողանայ  
մի շարք, սովորական կեանքում մարացարելի  
և աններելի՝ երեսյթներ, և ամենից առաջ  
թոյլ չենք տայ մեզ իսոսել մի մարդու հետ,  
որ համարձակուում է ասել, թէ մեր լեզուն  
ու զիտաւորութիւնն իրար հակառակ են: —  
Կատարելապէս անկողմնապահ մեզանից ոչ մշ-  
կը չէ ի հարկ է, ինչքան և լինել կամենայ.  
ամեն ոք կամայ ակամայ մի որոշ ազգեցու-  
թեան ներքոյ է գանուում: Բայց եթէ մենք  
իրաւունք ենք համարում մի մեծ խտիր զնել  
մեր և կաթոլիկ Միսիթարեանների մէջ՝ այդ նորա  
համար է, որ մենք մարդու բարոյական արժանա-  
ւորութիւնները և մտաւոր ընդունակութիւն-  
ները նորա դաւանութեան հետ չենք կապում  
և մէկի մասին մի անգամ սխալ զաղափար  
կազմելուց, առ հասարակ որևէ սխալ անելուց,  
յետոյ ընդունակ ենք մեր սխալը տեսնելու և  
ուզգելու. եթէ օրինակ անցեալում մեր ե-  
կեղեցոյ անգամներից մէկն իւր ուխտին  
զրժել և ուրիշ դաւանութիւն է ընդունել՝  
զայրանալով նորա գէմ առէտ, առէտ, ախմար չենք  
գարձնի կամ աշխատի անպատճառ, որ դա-

ւանակից երեայ, եթէ նշանաւոր զիտական  
անձն է, ինչպէս և մեր հայրերը չեն արել  
Եղին դատապարտելով չեն մոռացել յիշ-  
շել, որ նա բարերարոյ մարդ էր, եկեղե-  
ցական բարեկարգութեանց մասին առանձին  
խնամք է ունեցել. Համբառնացուն իրբեւ օտա-  
րասիրի մեղաղբելով՝ զնահատել են այնուամե-  
նայնիւ նորա հանձարլը անձնական արժանիք-  
ները: Միսիթարեանն այդպէս վարուել կարող  
չէ: Նորա տեսակէառի բոլոր մեր այն հայրե-  
րը, որոնք մեծ անուն ունին, զիտուն են ե-  
ղել նշանաւոր զրուածներ թողել՝ ուզեն չու-  
զեն պէտք է անպատճառ քաղկեդոնական կաթոլիկ լինեն, իսկ նոքա, որոնց հակաքաղ-  
կեդոնական լինելը չընդունել անկարելի է՝  
ոգէտ են և անհասկացող նոցա զրուածները  
տաստուածաբանական ապացուցութենէ զուրկու  
հայհոյական: Այսպէս՝ Շիրակացին կրկնելով  
այն առասպելը, թէ Հայոց եկեղեցին չին և  
նոր մասերի է բաժանուում չնի կամ քաղ-  
կեդոնականի մէջ հաշուում է՝ «Եղ դարու-  
մեր տպուած ու անտիպ մատենապիներն,  
դոցա վրայ աւելացնելով Թէոդոր Քոթենա-  
ւոր, Մաթուսաղայ, Սոլոմոն Մաքենոցաց վա-  
նաշայրը» Ան. Շիրակացին, Յովհ. Օհնեցին  
Խոսրովիկ թարգմանիչ, Մեսարոր եկէց, Մերե-  
սու, Ստեփաննոս և Մովսէս Սիւնեցիք և այ-  
լրն, ինչ պատճառապեանութիւններով իւրա-  
քանչիւրը՝ տեղը չէ ի հարկ է մի առ մի քըն-  
նել բայց այսքանը կալելի է ի նկատի ունեշ-  
նալ, որ օր Մաթուսաղայից մեր ձեռքը հա-  
սած միակ գրաւոր յիշատակարանը՝ Սա. Օք-  
րբեկանի պատմութեան մէջ գտնուող գա-  
ւանական թուղթը, յատկապէս Քաղկեդոնի  
ժողովի գէմ է զրուած: Ան. Շիրակացու եր-  
կասիրութիւններից միայն «ի Յայտնութիւն  
Ծեառն», Ճառը կարող է գաղափար տալ նորա  
դաւանութեան մասին, և այն նպատակ ունի  
չայց Յայտնութեան տօնը Յունաց և կա-  
թոլիկների գէմ պաշտպանելու: Ստեփաննոս  
Սիւնեցու մասին Օքրելեանից միայն յայտնի  
է, որ նա տեղից տեղ հալածուում էր եր-  
կարնակութեան գէմ մաքառելուն և Հայոց

դաւանութիւնը պաշտպանելուն համար և նորա անունով մնացած թղթերը գեմ են Քաղկեդոնի ժողովին և երկարնակութեան։ Սակայն Միխիթարեանն օդից փաստեր առնելով կանոնէ, թէ Մաթուսաղան և Ստ. Միւնեցին այնուամենային քաղկեդոնական են և նոցա գրուածները ուրիշների ձեռքով աղաւաղուած։ իսկ Ան. Շիրակացու թուղթն անվագերական է, թէև այդ թուղթը մեր մատունագարանի ժ. դարու ամենապատուական ձեռագրի մէջ է զանուում և նորա վաւերականութիւնն իսկական պատմագետի համար ոչ մի կասկածի ենթարկուել չե կարող։

Ահա այս կաթողիկական հայեցողութիւնըն է, որ յիրաւի ապարդիւն է դարձնում մեր Միխիթարեանների հետ ունեցած վեճը։ Մենք ձգում ենք խնդիրը պատմագիտական հիմունքների վերայ դնել իսկ նորա նայում են նորա վերայ դամանագարական հայեցքով։ Օձնեցու անուամբ մեր ձառը և աշխատում է աշխատում է այդ ձառի անվաւեր լինելը ցոյց տալ։ — շատ բարիւ բայց եկեք տեսէք, որ նա չե քաշուում պնդելու մինչեւ իսկ, թէ այդ ձառը նոյն այն թուականին է զրուել կամ կեղծուել երբ զրուել է նորան պարունակութ ձեռագիրը, զիւտէ նաև ով է կեղծել՝ անմահ յիշատակաց արժանի Սիմէնն մեծ կաթուղիկոսը։ Արդ, եթէ շատ շանցած մի շատ աւելի հին ձեռագրի մէջ նոյն ձառը զանուի՝ մեր հակառակորդն անշուշտ չպիտի քաշուի հաստատելու, որ այդ ամբողջ ձեռագիրն ես կեղծած է։ այս, եթէ նոյն իսկ ինքը Յովհանն Օձնեցին ողջ ողջ գերեզմանից ենէ ու ասէ, որ ինքն է այդ ձառը զրել և հակառակ է եղել Քաղկեդոնի ժողովին՝ նա էլի մի բան կգտնէ։ կամ Օձնեցին իւր անցեալը մոռացած կհրոշակուի։ կամ Սիմէնն կաթուղիկոսը կհամարուի նորա տեղ խօսող։ Այդպիսի բան է կաթողիկութիւնը։ Մի մարդ՝ որ առաջ

ու առաջ՝ դասանարանօրէն, այնքան վրատահ է Յովհանն Օձնեցւոյ երկու բնութիւնն ընդունելուն, որքան մենք օրուայ լուսոյն, ինչ կարելի է նորա մօտ պատմականօրէն ապացուցանիւ Փորձենք այնուամենայնիւ։ Շիրակացին իւր գրուածքի մէջ անթիւ խնդիրներ է շօշափում սար ու ձոր ձգելով խօսքը, մենք միջոց չունինք նոցա բոլորով զրազուելու այլ մեր ասելիքը երկու զիսաւոր կետերի շուրջ կկենդրոնացնենք։ ա) Վաւերական է արգեօք մեր հրատարակած ձառը և ինչ գաւանութիւն ունի Յ. Օձնեցին Բը նութիւնն ինպիսի նկատմամբ, լինի նա հեղինակ այդ, թէ միայն Ընդդէմ Երեւութականաց ձառի։ բ) ինչ է իսկապէս Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը և ինչով է տարբերուում քաղկեդոնականութիւնից և աղանդաւոր միանակութիւնից։

Ցիշեալ ձառի անհարազատ լինելուն առաջին և զիսաւոր փաստ Շիրակացին այն հանգամանքն է համարում, որ մենք ասել ենք, թէ այդ ձառը պարունակող ձեռագիրների գովանդակութեան հիմնական մասը կազմում է թղթոց զիրք կոչուած հետաքրքիր ժողովածունա, մինչդեռ թղթոց զիրքի հնագոյն օրինակը Անտօնեան Հարց մատենագարանում գանուածը լինելով՝ այդպիսի ձառ չունի իւր մէջ։ Արդ, կ. Պօլսից անցնելիս մենք անձամբ տեսել ենք Անտօնեան Հարց ունեցած օրինակը նոցա մատենագարանում և կարող ենք հաւատացնել, որ մեր ձեռագիրները բոլորովին տարբեր ժողովածուներ են ներկայացնում, քան նոցա օրինակը։ Թղթոց զիրքը հիմնական մասըն է կազմում մեր ձեռագիրների՝ ասել էլնիք նորա համար, որ մէկի նիւթերի ցանկի մէջ ընդհանրականից և մի քանի երկրորդական գրուածներից յետոյ՝ «Յաղագս թղթոց զրոցն է», վերնագիրը կայ։ Այժմ միջոց ունինք սառւզելու (առաջ չունենք), որ նոյն իսկ այդ վերնագիրի ներքոյ գանուած նիւթերը մեծ մասմբ տարբեր բաներ են, քան Անտօնեանց օրինակի բովանդակութիւնը. ընդհանուր է միայն Վրաց բաժանման մասին եղած գրա-

զրութիւնը և մի քանի ուրիշ թղթերու մենք չունինք նոցա օրինակի թանկագին հին յիշատակարանները, բայց դորս փոխարէն Անանիա կաթուղիկոսի թղթերը, ծուտէորդու թուղթը և այլ հետաքրիքի գրուածներ: Յամենացն գէպս ուրեմն Շիրակացու առանց այն էլ անհիմն փաստը (որտեղից գիտէ նա, թէ թղթոց գիրը անունով բոլոր մատեանները նոյն օրինակից պիտի արտազրուած լինեն և նոյն բռափակութիւնն ունենային) բոլորովին հերքուում է: Անտառներանց օրինակի մէջ կայ յիրաւի մի թուղթ՝ «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի, ապացոյց յերկուց Բնութեանցն աւել զՓրկիչն կամ մի Բնութիւնն վերնագրով, բայց այնպիսի կապակցութեան մէջ, որ աւելի հաւանականաբար Յովհաննէս Բ. Կաթուղիկոսին է պատկանում: Քան Յովհաննէս Դ. Իմաստասիրիին. թղթերի այն ամբողջ շաբթը որի մէջ նա գտնուում է, պահաս է մեր ձեռագիրների մէջ:

Ի՞նչ վերաբերում է այն հարցին, թէ ինչպէս կարող էր մի առողջ գարողութեան տէր մարդու մաքից անցնելու որ Յ. Օձնեցու անուամբ հրատարակուած ճառի «յերիւրոյն հաւանօրէն Սիմէն Կաթուղիկոսն եղած ըլլալու է», մենք երկարաբանել աւելորդ ենք համարում: Շիրակացին իւր տարօրինակ կարծիքը հիմնելով այն փաստի վերայ, թէ Սիմէ. կաթուղիկոսին շիրու կատարեալ Հաղբատացի վարդապետի՝ Խոչընդուն էր Յովհ. Օձնեցին՝ իւր Ընդդէմ՝ Երեւութականաց ճառի վարդապետութեամբը, մոռացել է զժրազդաբար, որ նորա ժամանակ գեռ Ընդդէմ՝ Երեւութականաց ճառը չէր յայտնուել և լցու չէր տեսել Զամշեանի: Օձնեցուն քաղկեդոնական հռչակող՝ պատմութիւնը այնպէս որ նորա համար անհրնարին էր մասածել, թէ իւր ամենաարժանաւոր նախորդներից մէկը՝ հասարակ ժազովրդի մէջ առարածուած աւանդութեամբ իսկ իրեն Յունաց գէմ քաջ ախոյեան յայտնի, ուրիշ դաւանութիւնն ունենալ կարող էր, քան ինքն ունէր: Եթէ այդ կաթուղիկոսը չէ խղճած մեծամեծ փոփոխութեանց ենթարկել տօնա-

ցցցը ելն, այդ արել է նա իւր հայրապետական բարձր իշխանութեամբ և չէ ծածկել արածը այլ իւր յառաջարանների մէջ գեղեցիկ կերպով բացատրել է մի առ մի իրեն այդ ձեռնարկութեանց մէջ առաջնորդող սկրդունքները: Ենչպիսի նրատմառութիւն ունենալու է՝ այդ մի հանգամանքից եղագակացներու համար, թէ նա կեղծ թղթեր շարադրելու ընդունակ էր: Կեղծելու մասին մարդիկ զանազան ժամանակներում զանազան գաղտափարներ են ունեցել և եթէ նախկին գարերում կարող էր մէկը լոկ բարեպաշտական զգացումից զբարդուած տօնելի մի անձի անունով նոր ճառ յեւրել և ներելի կլինէր՝ ԺԼ. Պարում խարերայի մէկը միայն, անձնական զիտումներով, այդպէս վարուիլ կարող էր. իսկ Սիմէն կաթուղի պէս մի մարդու մասին առանց պատկառանքի խօսելու համար՝ մի հայի երակներում բոլոր հայկական արիւնը պէտք է սպառած լինի: — Ավ կեղծ գրականութեամբ սյնչափ զրադուել է, որչափ մենք առելի ենք ունեցել նա դիտ որ կեղծելու համար էլ որոշ կանոններ կան և առանց Շիրակացի Հ. Բ. Սարգսեանի «Ծննադատութիւն Յովհ. Մանդակունւոյ» վիրը կարգացած լինելու կատէ՝ կարողէ արդեօք այս ինչ պատմական յիշատակարանը կեղծ լինելթէ ոչ Ծնթագրել թէ Ծնդդէմ գաւանողաց մի Քրիստոս յերկուս բնութիւնն ճառն ուրիշ Յովհաննէսի կամ մի ուրիշ հեղինակի զործ է և պատահաբար Օձնեցուն վերաբուած՝ այդ տարբեր է, գորա գէմ մենք բացարձակ առարկութիւններ լուսնինք, ինչքան և հիմնենքից զորկ լինի այդ ենթագրութիւնը, բայց թէ նորա հեղինակը, ով կուզէ թող լինի՝ կեղծելու, իւր գրուածըն ուրիշին ընծայելու մտադրութիւն չէ ունեցել այդ հատատապէս ասել կարող ենք, նորա մէջ կեղծիքի ամենաթեթէ նշան անգամ չկայ: Թէ ինչու կատարեալ կեղծիք՝ և անհարազատութեան նշան՝ է օրինակ նորա վերջը, ի հարկ է ոչ հեղինակի ձեռքով, աւելացրած յիշատակարանը, որի համաձայն Ն. Լամբրոնացին այդ թուղթը հետը կ. Պօլիս է տարել՝ այդ միայն Շիրակա-

ցոն և յայտնի ՆՅԷ յիշատակարանը զբոյլ  
ոչ մի աեղից աեղեկութիւն չունէք այդ մաս-  
սին՝ ապա դժուար է հասկանալ թէ ինչու  
նա «յիշեալ ճառը հին վաւերական երևցնե-  
լու համար անպատճառ Համբրոնացուն պիտի  
յիշեր» որի ուզգագաւանութիւնը Շիրակա-  
ցու տեսափետից շատ էլ վստահելի չեր մի  
չաղքատացու համար թողորովին մատածին  
է նաև անհարազատութեան գաղտնիքը՝  
պարզո՞ նշան համարել պատճենի կամ ըն-  
ծայականից պահասութիւնը և խորհրդաւորու-  
թիւն տեսանել վերջարանի մէջ։ Պատճեն այդ  
ճառն անշուշտ ունեցել է, և մենք նորա ա-  
ռանձին հրատարակութեան յառաջարանի մէջ  
ակնարկել ենք, թէ ում կարող էր նա ուղ-  
ղուած լինել բայց որ պատճենը ընկել է, ինչ-  
պէս նման ուրիշ հազարաւոր հին գրուածք-  
ներինը՝ խորհրդաւոր ոչինչ չկայ այդաեղ։  
Ծնդհակառակն եթէ նա մի շինծու պատճեն  
ունենար՝ պաշտօնապէս ուղղուած առ հա-  
մուրէն եկեղեցին Հայաստաննեայց, և կամ առ  
յոյնաւ և կամ առ Հայրապետ ոմնաւ այն ժա-  
մանակ իրաւունք կունենայինք նորա հարա-  
զատութեան վերայ կասկածելու Վերջարանը,  
ուր հեղինակն իւր համեստութեան հարին  
է կամեցել հատուցանել ընթերցողներին, այն-  
քան պարզ է և անկեղծ, որ փոխանակ նորա  
խօսքերը աննպատակ կերպով ընդգծելու, ա-  
ւելի լաւ կինուր դաս առնել նորանից։ Խօկ  
երբ Շիրակացին նորա գրուածքի մէջ «իրա-  
րու խիստ հակասական և տարտամ պարա-  
գաներ» է գտնում, այնու, որ իրը «Յէջ 192  
կը ծանուցանէ, թէ այդ ճառը կըզբէ առա-  
ջին երեք տիեզ ժողովները ըլնդունող նեստո-  
րականաց դէմ», «իսկ 193 էջում ընդհակա-  
ռակն իրրե Ծրեւութականներ և Ապողինա-  
րիսեանս կըյանդիմանէ զանոնք»։ «Յէջ 195  
դարձեալ իրրե ժողովարանին Քաղկեդոնի և  
Հենինի խօսքը կըշքէ անոնց վրայց—չպիտենք  
արգեօք ուրիշ զիսով է ծաղր անում թէ  
իրան է կամենում ծաղրելի կացուցանել։  
Մենք ի հարկ է հայերէն լեզուի հմտութեան  
վերարերմար յաւանութիւն չունինք Շի-

րակացու և նորա միաբանակիցների չեա ոոք  
մեկնելու, և հպատակօրէն խոնարհուում ենք  
նորա խորին արհամարհանքով մեր անհասկա-  
ցողութիւնը յանդիմանող խօսքերի առաջ,  
այնուամենային այդ ճառի միտքը շատ պարզ  
է մեզ համար և ոչ մի հակասութիւն չէ պա-  
րունակում։

Ո՞չ Նեստորականների դէմ է զրուած  
նա և ոչ Ապողինարեանների, այլ ինչպէս վեր-  
նագիրն է ասում։ «Ընդդէմ դաւանողաց զմի  
Քրիստոս յերկուս բնութիւնսաւ չեղինակը գե-  
ղեցիկ կերպով բացատրում է նախ թէ ինչ-  
պէս այդ դաւանութիւնն ունեցողները, չնա-  
յած իրենց արտաքին պածուանքներին, հրա-  
պուրիչ լեզուն՝ երկու կամք և երկու ներ-  
գործութիւններ բաժաննելով Քրիստոսի մէջ և  
մարդկային կրքերը «յատուկ մարդոյն միայնոյց  
վերապրելով՝ կամայ ակամայ դէպի նեստորա-  
րական մոլորութիւն են զիմում։ Ապա պաշտ-  
պանել կամենալով իւր ուղիղ դաւանութիւնը՝  
հարկ է տեսնում նախ հեղինակի իւրացնոց դէմ  
եղած այն սուստ ամբաստանովթիմները, իրու-  
թէ իրենք մի բնութիւն գաւանելով հետե-  
ւող են հանդիսանում Երեւութականների և  
Եւտիքէսի, այսինքն նոյն աղանդաւորների  
որոնց դէմ զրեթէ նոյն փաստերով մաքա-  
ռում է իւր Ընդդէմ Երեւութականաց ճա-  
ռի մէջ։ Նա ցոյց է տալիս այստեղ հաս-  
տատուն փաստերով, թէ ինչ մեծ տարրե-  
րութիւն կայ իւր դաւանածի և Եւտիքա-  
կանութեան ու Երեւութականութեան մէջ։  
ապա մի առ մի թուելով ու հերքելով այն  
թիւր եղբակացութիւնները որոնք անխուսա-  
փելի հետեւութիւն են քաղկեդոնական վար-  
դագետութեան վերջացնում է խօսքը Զա-  
տագովելով խաչեցարի գործածութիւնը սըր-  
բասացութեան մէջ։—Որտեղ են ուրեմն փ-  
րարաւ խիստ հակասական և տարտամ պա-  
րագաները։ Միթէ նոյն իսկ ճառի այդ  
պարզ և մի որոշ ժամանակի համար միայն  
հականալի բովանդակութիւնն ամենալաւ  
վկայութիւնը չէ, թէ ինչ ժամանակի մէջ նա  
կարող էր յառաջ եկած լինել Երկու բնու-

թեանց, մանաւանդ թէ երկու կամաց, երկու ներդործութեանց ու խաչեցարի խնդիրը չայց համար հրատապ և հարեւանների հետ ունեցած վէճերի միջոցին զիսաւոր և առաջնակարգ խնդիր եղել է միայն Հ—Ը գարերում և առաւել այդ ժամանակ նա այնպէս պարզ կենդանի կերպով հասկացուել ու բացատրուել կարող էր, ինչպէս հասկացուել ու բացատրուել է այս ձառի մէջ Յաջորդ շրջաններում ծիսական և ուրիշ երկրորդական խնդիրներ աւելի մեծ նշանակութիւն են ստանում և այդ շրջանների գրողը, մանաւանդ թէ կեղծողը, հազիւ թէ առանց նոցանից մէկն ու մէկը շօշափելու անցնէր կամ չենթարկուեր իւր ժամանակի ոգու ազգեցութեանը: Բացի դորանից ներկայ ձառի մէջ կան այնպիսի հնարանութիւններ (արխայիզմ), ինչպէս օրինակ Մծղնէ անունը, որի վրայ մենք ուշադրութիւն ենք հրատիրել արդէն մեր Յառաջարանի մէջ և որ առ առաւելն ժի՞ դարից յետոյ այդ նշանակութեամբ յիշատակուել չէր կարող. նորա սակաւաթիւ յիշողներից մէկն է Օձնեցին իւր Հնդղէմ՝ Պատիկեանց ձառի մէջ, որ և ամենից լաւ զիտեր այդ բառի նշանակութիւնը, որովհետեւ շատ է դործ ունեցել Մծղնէից հետ: Եթէ այս ձառի մէջ գժուար հասկանալի տեղեր կան ու մի այնպիսի անհմաստ բառ՝ ինչպէս է եր. 19 «անէ», այդ ցցց է տալիս միայն որ նա ուրիմն ձեռքէ ձեռք է անցել ու շատ անգամ արտադրուել երբեմն նաև համրակ գրիների ձեռքով: Ենթադրելով ապա թէ անմահ և անապական էութիւն թանին խառնեալ ընդ ապականացու և մահկանացու գոյութեանս և վեհագոյնն ընդ վատթարագունիս զուգամասնեալ՝ զերկուան ի մի գոյացոյց, յեղափոխեալ ի ծայրագոյն բարի, և անապական կազմեալ աստուածացոյց դարձուածը նոյն է ինչ որ «յեղափոխեալ աստուածաց»՝ հարաբեկութիւնը է անունը մի բնութիւն շարադրեալ, «յերկաքանչիւրոցն ընութեանց և կերպարանաց ի մի յատկական անձնաւորութիւն ընթացեալ», «միանալն յայտնարկու ցուցանէ զբնութեանցն անքակութիւն և զմիւթիւն», և այլ այսպիսի դարձուածներ, կքաշուէին ասելու, թէ «անծանօթն մի ըսելով զբնութիւնը և կոմ զքրիստոս ըստ ընութեան», և ոչ թէ «ըստ միաւորութեան կը հասկեայ», իսկ Օձնեցին «Ղքրիստոս կամ անձնաւորական միաւորութիւնը». թէ «սորայս ասելը մի բնութիւն մարմացեալ քանին ուրիշ բան չէ՝ բայց եթէ մի Քրիստոս ևն ևլու Շ հարկ է, եթէ Եիրակացու քմահաճոյքից կախուած լիներ բառերին նշանակութիւններ տալ՝ բնութիւնը միայն այնանեղ մի կիներ, որտեղ նորան ձեռնոտու և, բայց մենք նորա քմահաճոյքիւններին հետեւոր պարտաւոր չենք և առանց

նայ չետ գործ չունենալով աւելի ազատօրէն է յայտնել իւր կարծիքները և որ Մխիթարյանները խոհեմութիւն են համարել չհրատարակել նա թող վկայէ: թէ արդեօք այդ կէտը «հակառակ է ուղիղ վարդապետութեան»: Գանք սակայն վերջապէս այն հարցին թէ ներկայ ձառի վարդապետութիւնն ինչ չափով համաձայն է Յ. Օձնեցու միւս զըրուածների մէջ եղածին: Եիրակացին առանց խղճաշարուելու ասում է, թէ Հնդղէմ՝ Երեսութականաց ձառի «բացատրութիւններէն» և ոչ մին կրդանենք ձեր հրատարակած ձառուն մէջ, և ձեւացնում է, իր մէնք ևս ցոյց չենք տուել: Արդարե մեր հրատարակած ձառուից միայն մի վկայութիւն յառաջ բերինք: բայց կարծում էինք բարեմիտ ընթերցողի համար այդքանն էլ բաւական կիներ, և մեր հակառակորդները կարդարվ այդտեղ՝ «Այսպէս յերկուց ընութեանց մի բնութիւն թանին բանին մարմնացելոյ խոստվանի ամենայն աստուածակար հոդի», կարգապատկ անձամբ՝ «զուգամասնեալ զերկուան ի մի գոյացոյց» յետ միաւորութեանն ի բաց բարձելոյ յերկուս հատմանն, «Երկաքանչիւրոցն անփոփոխելի բնութեանց ի մի բնութիւնը շարադրեալ», «Երկաքանչիւրոցն բնութեանց և կերպարանաց ի մի յատկական անձնաւորութիւն ընթացեալ», «միանալն յայտնարկու ցուցանէ զբնութեանցն անքակութիւն և զմիւթիւն», և այլ այսպիսի դարձուածներ, կքաշուէին ասելու, թէ «անծանօթն մի ըսելով զբնութիւնը և կոմ զքրիստոս ըստ ընութեան», և ոչ թէ «ըստ միաւորութեան կը հասկեայ», իսկ Օձնեցին «Ղքրիստոս կամ անձնաւորական միաւորութիւնը». թէ «սորայս ասելը մի բնութիւն մարմացեալ քանին ուրիշ բան չէ՝ բայց եթէ մի Քրիստոս ևն ևլու Շ հարկ է, եթէ Եիրակացու քմահաճոյքից կախուած լիներ բառերին նշանակութիւններ տալ՝ բնութիւնը միայն այնանեղ մի կիներ, որտեղ նորան ձեռնոտու և, բայց մենք նորա քմահաճոյքիւններին հետեւոր պարտաւոր չենք և առանց

նորա աննպատակ առարկութեանց մէջ մանելու կիրինենք մեր պարզ խօսքը. Յովհ. Օձնեցին Ընդդէմ Երեւութականաց ճառը զրելիս աչքի առաջ է ունեցել այնպիսի աղանգառառներու որոնք մի բնութիւն չարաշար մաքով կին համանում և Երկուշասելու համար ամեն տեսակի մօլոր բացատրութեանց էին դիմումն ուստի սովորեցնում է նոցա. թէ և յիրաւի Երկու ասելը վասնգաւոր է, բայց միայն այն ժամանակի, երբ մի բնութիւն վրան չաւելացնենք: «Երկնչիս յերկուց ասել բնութեանց» երկիւղ մեծ զոյ, եթէ ոչ արժանապէս և զմի ասել Քրիստոսի Բնութիւն», «զի թէ և ասեմք մի բնութիւն Բանին մարմացելը» ոչ այդպէս խելայեղ մասածութեամբ, որպէս թէ միոյն ի միւսմէն բարձեալ: Միթէ միւս ճառի մէջ ևս հեղինակը կուր չէ վարել այդպիսի խելայել մնածութեանց դէմ և նյյն կարծիքին չէ, թէ «զմին ասել բնութիւն» եթէ որպէս պարան է ասել՝ ըստ ճշմարտութեանն կարգի ոչ ասիցէք, բազում շանց հօմատեսակը եղանիցիք, թէ «անհասանելի միաւորութիւնն և ոչ բընութեանցն այլայլութիւն առաջնորդեն մնզ զմին ասել բնութիւն մարմացեալ Բանին»: Կարծում էք միթէ, որ Հռովմի աստուածարանները Ձեզ՝ Միխիթարեաններից, այժմ ևս թոյլ կտան «զմին ասել բնութիւն մարմացեալ Բանի», խոստովանելով «ապա ուրեմն մի բնութիւն և մի դէմ Քրիստոսի», և եթէ թոյլ տուել են՝ սեը սպիտակ դարձնելու արհեստի միջնորդութեամբ չէ եղել կամ ի շընորհս Ձեր հռոմին մատուցած ծառայութիւնների: Հրաւելիում էք մեզ նաև «Դմասատաւէր կաթուղիկոսի ժամանակ գումարուած ժողովի կանոնները կարգալ», որպէս զի մեր պատրասները տեսնենք. շատ բարի, կարգանք Ը. և Ի. կանոնները. «Արժան է և զհացն անխմոր և զգինին անապակ հանել ի սուրբ սեղանն»: «Պարտ և արժան է զիսաչեցարն երիցս անգամ զհետ բերեր. — Յոյն-Հռովմէական եկեղեցւոյ դէմ չեն կարգուած այդ կանոնները և նոցանից մէկն ու մէկը բաւական չէր արգեօք, որ Օձնեցու ժամանակակից այդ եկեղեցին եօ-

թանաանեկին և օթն անգամ բանապրէր նորան. այսաեղ կանոններ զնողն ու իւր Ճառով խաչեցար պաշտպանողն անհրաժեշտ է արդեօք, որ տարբեր անձեր լինին Ժէսէր են դոքան ի հարկէ և դաւանութեան հետ գործ չունին. փորձեցէք հապա դուք, որ Դմասատասիրի հարազատ ժառանգ որդներ կը կամենում լինել և հայկական ծէսէրի հաւատարիմ աւանգապահներ, այդ կանոններից մէկն ու մէկը պահպանել՝ «զմինին անապակ հանել ի սուրբ սեղանն», կամ «զիսաչեցարն երիցս անգամ զհետ բերել» — և այն ժամանակ կտեսնեք, որտեղ է պատրանքը: Սակայն բաւական է:

Մեզ մնում է տեսնել՝ զօրութիւն ունի Շիրակացու այն առարկութիւնը զնէ, թէ «Օձնեցու ոճն ու լեզուն այնքան կրտարիւրին անծանօթի լեզուէն և ոճէն, որքան երկինք՝ յերկրէ»: Մինք լեզուագէտ չենք և աւելորդ ենք համարում լեզուի մասին վիճել մի մարդու հետ, որ մեր «դասական լեզուն լաւ հասկալու վիճակի մէջ ըլլալը» չէ ընդունում: Կինզրենք միայն մեզ հաւատար հասկացողներին համեմատել մեր հրաւարակած ճառը մի կողմից Յ. Օձնեցու միւս Ճառերի և միւս կողմից Միմէնն կաթուղիկոսի գրուածների հետ և տեսնել՝ որտեղ է մերձաւ որութիւնը և որտեղ հեռաւորութիւնը: Նթէ մեր գէմ եղած փասաը միայն այն է, որ այդ ճառի մէջ չայկզ. զառարանի վկայութեամբ Երբէք մեր նախնեաց քով չգործածուած» բառեր կան այդպիսի բառեր մենք ևս որքան կուզէք, կարող ենք բերել Յ. Օձնեցու միւս զրուածներից աշաւասիկ՝ Երազազրաւելի, բարեվկայնվականաց, ներհորդեսցի, դժոխադատելի, նախանաւեալ, յառաջերազանցագոյնն, վերտոնելով, ներկազմնալը, թարախածուծք, անկարածածկելի, տարրատոփութիւն, փոխարուաեալ, ներիսորհը դուստում, իւրեանցացոյց, ներքատակեմ ներինելութիւնն, յետամուկանաքար, ներքսածողականք, զկերպնողնակութիւնս, հողածնիցելոյն, վարակեալ, պական օտարուտի բարդութիւններ են դոքա միթէ, քան ձեր յառաջ բերածները. կամ ինչո՞ւ վերաթեմալ, վերտո-

Նելով, վարարկեալ ասողը՝ ստորաբնելով,  
վայրազարկեցան չի ասի. յարահիւսել, յարա-  
ռոցեալը, յարադեաց գործածողի համար՝  
յարակացուցից, յարարարելով օտարութիւնը  
է միթէ. Ախորժակի բան է ի հարկ է. իսկ  
մեր ախորժակով, մանաւանդ թէ հասկացո-  
ղութեամբ, բաւական է միայն համեմատել  
նոր ձառի և «Յազագս կարգաց եկեղեցւոյ»  
երկասիրութեան սկսուածքը՝ «Զասառուածո-  
յին և գիենդանարար Հոգւոցն Սրբոց... պըտ-  
ղաբերեալ ի խորհուրդ եկեղեցւոյ» — համզուե-  
լու համար, թէ երկու տեղերում ևս գրողը  
նոյն տրամաբանութիւնը, նոյն լեզուն ունի:

Դժբաղգաբար այս յօդուածը մեր ցան-  
կութեան հակառակ չափից աւելի երկարեց, և  
մենք միջոց չունինք այլ ևս երկար կանգ առ-  
նելու վերև նշանակած երկրորդ կետի վերայ-  
թէն այդ մասին երկարաբանելու հարկ էլ  
չկայ, քանի որ նախորդ յօդուածով բաւա-  
կանաչափ ընդարձակօրէն պարզել ենք մեր  
հայեացքները և արգէն այնտեղ տուել ենք  
Ծիրակացու գրեթէ բոլոր առարկութեանց  
ընդհանուր պատասխանը՝ միւրեղ Ազէքսան-  
դրացու, Անտիռքացիների, Եփեսոսի, և Քաղ-  
կեդոնի ժողովների անունները լսուծ պէտք է  
վիճել՝ պնդելու համար, թէ յերկուց բնու-  
թեանց մի զնովթիմ, կամ մի անծն յեր-  
կուս զնովթինս ասել միւնցին է»։ Պարզ են  
կարծեմ այդ խօսքերը, իսկ եթէ դուք, Ծիրակա-  
ցի Հայր, համոզուած եք, որ «Աւոնի և Քաղկեդո-  
նականաց գաւանութիւնն ոչ մի տարրերութիւն  
չունի որ է ըստ բնութեան յերկուց գարձ-  
ուածից՝ առեք եկ, պատմութեան ու դաւա-  
նանքների պատմութեան մի գասագիրք ու  
կարգացէք, վիճելն աւելորդ է։ Զեր ճար-  
տար հարց ու պատասխանների, մեր բե-  
րանով Զեր ասածները հաստատելուն ու  
ջատագովելուն համար գուցէ Զեզ շատ բար-  
ձը թուանշաններ կդնէին այն գովոցներում  
ուր սովորեցնում են սեր սպիտակ գարձե-  
լու արուեստը, բայց մեզ վերայ, ապահով ե-  
զէք, այդ խաղերը ապաւորութիւն չեն թող-  
նում և Դեռ առւած հարցերին վասահու

Թեւամբ մեր կողմից «Զգիտեմ» պատասխաննելը նյուքան խզմալի է, որքան մեր իրը «Անհետ-կում գտնուած ժամանակ» արտասանած այդպիսի «Զգիտեմ» ներով մեր հայկական մատենագրութեան մէջ ունեցած տղիտութիւնը հաստատելը: Ամեն կարդացած մենք ուսումնասիրած չենք համարում և Զեզ պէս նախնեաց բոլոր դրուածները կարդացած և ուսումնասիրած շինելով՝ կամաչէինք միայն այն ժամանակ, երբ մեր զգիտցածը իրեւ զիտցած ծախտինք: Սակայն մեր ունեցած դոյզն ծանոթութեամբ հանգերձ համարձակօրէն կանգենք, մեր Նկեղեցւոյ բոլոր հայրերը՝ ինչպէս Զեր հին այնպէս և նոր անուանած եկեղեցւոյ, ամենքը, որոնք հայր անուան արժանի են՝ դաւանել են միշտ այսպէս կամ այնպէս յերկուց բնութեանց մի բնութիւն, ինչպէս և կիւրեղի և ոչ երրէք մի անձն յերկուս բնութիւնու ինչպէս Քաղկեդոնի ժօղովն է գաւանում: Զեր յառաջ բերած բոլոր վրկայութիւնները հայրերից առաջին կարգին են պատկանում: Եթէք հասպա մէկը, որ պարզապէս երկրորդը բովանդակէք: Դուք ասում էք, թէ մենք կիւրեղի վարդապետութեան ոչ պարզութիւնը և ոչ խորութիւնն ըմբռնած ենք, աւելի նուազ «Արարատն ընթերցող տէրաւէրները» բարի: ուրեմն թոյլ տուէք մեր և մեր տէրտէրների հասկացողութիւնից բարձը Զեր նրբին բացատրութիւնները մի կողմ թողնել և հաւատացնելով Զեզ այնուամենայնիւ, որ մենք Ցիւպինգէնի: Փարիզի և Մարուրզի մատենագրաւանների մէջ ամիսներով առաջներս ենք ունեցել և կիւրեղի գրուածները պարունակող *Migne*-ի ու *Mansi*-ի ահազին հատորները՝ մի միայն վկայութիւն բերեկ: «Պատովաննիք... ոչ երկուա բնութիւնս զմի Որդին՝ մին երկրագույնի և միւսն ոչ երկրագույնին, այլ մի բնութիւն բանին Աստուծոյ մարմսացեալ»: \* *Փորձեցէք* հասպա այլտեղ ևս առանց «մա-

· ὁμολογοῦμεν . . . οὐ δύο φύσεις τῶν ἔνα μέδον μία προσκυνητὴν καὶ μίαν ἀπροσκύνητον, ἀλλὰ μίαν φύσιν τοῦ θεοῦ λόγου σαφαρχομένην. (Adriginas. Migne 76, 1212)

թեմատիկական մինչ երկու հասկանալու պրեգել, թէ նցն բանասն ունի և կիւրեղի «մի ընութիւնն», ինչ որ Քաղկեդոնի ժողովի սահմանած՝ «յերկուս ընութիւն»\*, և թէ Յ. Օձնեցին քաղկեդոնական մտքով է հասկացել նորան, երբ իւր Հնդղէմ Երեսութականաց ձառի մէջ վկաց է կոչում՝ «ինստովանել ի Քրիստոս» մի գէմ մի անձն և մի նորա ընութիւն»:

Դուք «հակապտամական ուրացութիւն» էք անուանում մեր ասածը, թէ Հայոց եկեղեցին այդպէս կոչուած միաբնական կամ եւտիքական վէճերի մէջ չէ մասնակցելու որովհետեւ արդի պատմազրութեան չափազանց լաւ ծանօթ լինելով՝ այն հասարակ բանը չդիտէք, որ միաբնական կամ եւտիքական արդի եկեղեցական պատմութեան մէջ կոչուում են Քաղկեդոնի ժողովից յետոյ եղած վէճերը մինչև Յուստին Ա. թագաւորութիւնը (518 թ.) կամ առ առաւելն մինչև Ծ. տիեզ. կոչուած ժողովը (553 թ.ին): Եւ մինչ մենք հաստատել ենք կամենում թէ մեր եկեղեցին իւր սոանձին կազմակերպութեամբ այդ վէճերի ծնունդ չէ, մինչև Ներսէս Բ. Աշտարակեցին նոցանով չը զբաղուել նայել է հետևարար նոցա վերայ իրեւ որսից եկած խնդիրների վերայ ընդունելով կամ մերժելով ըստ իւր Ներքին համոզման, ոչ ինքն նոցա պատճառաւ իւր ընթացքից շեղուելով և ոչ նոցա մի նոր ընթացք տալով՝ ապարդիւն վաստա՞ն չէ Զեր կողմից հարցեր շամել ցոյց տալու համար, որ մեր Ծ. Ը. և յաջորդ գարերի հայրերին զբաղեցրել է Բնութեան խնդիրը:— Ապարդիւն չեն նաև Զեր բացականչութիւնները՝ իրը մեր «Հայաստանեայց եկեղեցին՝ իրեւ մի անքակտելի ամբողջութիւն» հազար չորս հարիւր տարիներէ ի վեր կախ մղած է երկարնակութեան գէմ հաստատելը նոյն լիներ, ինչ որ ուրանալ նախնի ժամանակներում և այժմ բազմաթիւ հայերի իրենց ուխտին դրեն քաղկեդոնականութիւն ընդունելը:

Որ մենք Եղիներ, Վահաններ ունեցել ենք՝ այդ ժխտելու հարկ չունինք ամեննեին, ինչպէս Դաւթ, անսխալականութիւն պաշտպանելով՝ հարկ ունիք ժխտելու Ռուրիու Ա. պապի ներձուածող և Վիկտոր, Զեփիւրին ու Կալլիստ պապերի Միհշանական լինելը, և կամ խոչեմութեամբ լաելու պատմական անհերքելի փաստերի առաջ: Ճշգրիտ, քննադատական պատմութիւնը թող ցոյց տայ, որ Ներսէս Շինողը Ներսէս Լամբրոնացին, ով կուգէք՝ քաղկեդոնական է եղել, մենք պատրաստ ենք այդ ևս ընդունելու. բայց միթէ գորանով եկեղեցու ամբողջութիւնը քակտուած կլինի. քակտուածէք համարում Դուք միթէ չոռումէական եկեղեցւոյ ամբողջութիւնը նորանովի որ բազմաթիւ պատեր է ունեցել՝ մարդ անուանն իսկ անարժան, ուր մնաց թէ քրիստոնեայ, եպիսկոպոս կոչուելու. որ անթիւ քրիստոնեաներ դուրս են եկեղեցւոյ գրկից և ուրիշ զաւանութիւն ընդունել:

Հարկաւ երբ Զեր «Հնագոյն և անտիպ յիշատակարանները» ցոյց են տալիս, «թէ զիւակն մինչեւ Ս. Աշտարակեցին, սորա յաջորդ Յովհաննէս Գարեղենացիէն—ի բաց առեալ Աբբահամ կաթողիկոսը (միայն միթէ, ուրիշն ինքը Գարեղենացին Նղիս կաթողիկոսն ևս քաղկեդոնական են եղել)՝ մինչև Յովհան Օձնեցի՝ ամեններին միաբան կացին յեկեղեցիս չոռումոց՝ մենք ասում ենք, որ Զեր անտիպ յիշատակարանները չտեսնուած զօրութիւն ունին ուրեմն ապազեալ պատմութիւնը յեղաշրջելու և մի նոր զարմանալի պատմութիւն հիւսելու, ուր քաղկեդոնական կաթողիկոսը ոչ քաղկեդոնականին հետեւում է այնպիսի արագութեամբ և այնպէս աննըշմարելի կիրսով, մինչ ժամանակակից պատմիչներն անգամ չգիտեն, երբ իրենց եկեղեցին քաղկեդոնական է եղել և երբ ոչ:

Երեխ անցեալ յիշատակարանների վերաց վստահացած է կրկնին, որ ապացոյց էք պահանջում մեր այն ասածի համար, թէ միաբնակ կոչուած եկեղեցիներից ոչ մէկը հետեւող չէ եղել Եւսիքէսի: Պատմական հին

յիշաստակարաններ եք կամենում՝ կարգացեք օր, Յովհան Եփեսացու պատմութիւնը (գերմ. Թարզմ. Schönfelder, 1862). Նորեկն էք կամենում. կարգացեք՝ Krüger. Monophysitische Streitigkeiten. 1884, կամարգեն մի անգամ ցոյց տուած՝ Loofs. Leontius von Byzanz. 1887: Բայց կան պատմական եղելութիւններ, որոնք ապացոյցի կարոտ չեն. թէ չէ Դուք կենէք կպահանջէք մեջնից ապացուցանել, որ հարեցները նեստորական չեն, որ Ձեր կողմից մեզ իրրեւ Եկապատմութեան հարուստ ու անսպառ աղբիւր ներկայացրած Մանիքէապաւղիկեան թողնդրակեցոց աղանդի երեկի ուստամասիրութեան մի շարք յայտնութիւնները սասայդ չեն. որ օր եթէ Արիստոսութիւնն և ուրիշ շատ աղանդներ՝ գոնեւ. Բ. գարում յայտնուած Ալղջիանոսը չեն կարող Գ. գարում սկըսուող «Մանիքէութեան ծնունդ» լինել, որ Մապանիացի Պրիսկիլիաննի (վերջերն Ավիլայի եպիսկոպոս) հետեղ Պրիսկիլլականութիւնը Պրիսկիլլայ բազմահարուստ և հրապուրազ իսոց ձեռքով չէ յառաջացել են:

Ապացոյցներ բերելու մէջ մենք Ձեզ հետ հաւասարուել ի հարկ է կարող չենք. Դուք ունիք ապացոյցներ, որոնց առաջ պատմագիտների ամբողջ աշխարհն ափիրերան կմնայ: Ահաւասիկ յուրարկիլիկ թարգմանչէն առած Ձեր զեղեցիկ վասարը. «Սապէս և վասն կրկն ասելոյն ի Պրիստոս կամ և ներգործութիւնը՝ եթէ ըստ բնութեան ոք զայն ասիցէ գոլո՞չ արտաքոյ ճշմարտութեան զտանի աստցեալ ... իսկ թէ ըստ միաւորութեան, և նմին նիքեան միաւորեցելում ժայրհետիցի տալ երկուս կամ և երկուս ներգործութիւնս՝ հեռի ի ճշմարտութենէն և Մաքսիմոսի ի ներքոյ անկեալ պալմանաքն գատապարտեսցի. քանզի ուր ապա այնու հետեւ երեխոցի վեհագունին յաղթել . . . Զի ինքն թոնն Աստուած զմարդկայինն իւր ուղղեր զկամ և ինքեան ազգմամբն զմարմնոյն իւրց շարժեր ներգործութիւնս և կիրաւ:

Ի նկատի առէք նախ ընթերցող, որ այսուել յիշաւած Մաքսիմոսը է՝ գարու կեսերին

ապրող մի կրօնաւոր էր և այդ ժամանակ Միտակամայից յարուցած վեճերի մէջ դիսաւոր և ամենաեռանդուն ջատագում երկու ներգործութեանց եւ երկու կամեների վարդապետութեան, ուստի և կոստանդ Բ. կայորից կազմականարտելով՝ ասանջանքների ենթարկուեցաւ ու լազերի աշխարհն աքսորուած մեռաւ, և այդպէս խոստովանող անունը ժառանգեց: Արդ մենք ամենքս յուրարկիլ չենք ուսումնասիրել և Շիրակացու չափ չայսց լեզուի հմտութիւն չունինք. բայց ի հարկէ ամենքը մեզ հետ վերի խօսքերից այն հասկացան, թէ ով յանդգնում է միաւորեալ Քրիստոսի մէջ երկու կամք և երկու ներգործութիւն ընդունել նա Մաքսիմոսի (որ ուրեմն նոյն է, ասել՝ Յոնն Հռոմէական եկեղեցոյ գաւանութեան) սխալմանքների մէջ կընկնի. որովհետեւ երբ աստուածայինը, անշուշտ պէտք է յաղթէ և Բանն Աստուած ուղղած լինի այն ամենը, ինչ որ մարդկային է. ուրիշ խօսքով այդտեղ այլեւ առանձին մարդկային և առանձին աստուածայինն կամքերի և ներգործութիւնների մասին խօսք լինել կարող չէ: Բայց . . . այդ խօսքերը ծառայում են Շիրակացու համար իրեւ գեղեցիկ վաստ, որ Խոսրովիկ, և նորա հետ միասին չայսց հին եկեղեցինց Պրիստոսի մէջ «Ետ միաւորութեան» երկու բնութիւն, երկու ներգործութիւն և երկու կամք և ընդունել: Ծնէնչ կարելի է ասել հապալ այդպիսի մարդու, այդպիսի վաստի դէմ:

Սակայն այդ գեռ ոչինչ, մարդիկ սխալական են՝ սխալի գլուխ խօսք գտնել միշտ կարելի է. մի ուրիշ բան, որի գլուխ գժուարանում ենք խօսք գտնել՝ այդ Ձեր Միտակարեաններիդ, սիրոյ և միութեան հրաւերն է: Այդպէս ուրեմն. Դուք առանց քաշուելու ասել կարող եք, թէ ուրիշ եկեղեցիներ իրեւ անջատեալ իրեւ հերձուածող, իրաւունք չունին ոտնծըգութիւններ անելու չայսց եկեղեցոյ գլուխ միութիւն պահանջնելու, բայց Դուք իրեւ կաթոսլիկեայք ունիք – և ոչ միայն ասում:

այլ և իրական ջանքեր էք գործ դնում նոյն ուղղութեամբ (ապահով եղեք, եթէ ուրիշներին յայտնի չէ այդ, մեզ յայտնի է) — և Զեր իրաւունքը գաւանարանական փաստերով ապացուցած լինելու համար՝ հրատարակում էք ի պատեհ ժամու գեցէրի աշխատասիրութիւնը: Դրուք որ առանց քննելու իրրե դաւանանք ընդունում էք, թէ ո. Փետրոս Հռոմում 25 տարի եպիսկոպոսութիւն է արել ուխտ էք գնում նոյն այն վաւերական աթոռին որի վերայ ինքը Փետրոս առաքեալը նատել է: Հաւատում էք Հռոմի շուրջ կատարուած բոլոր հրաշքներին հաւատում էք ս. Աստուածածնի անակի Պաղեստինից հատակա փոխազրուած լինելուն: Խորենացու պատմութեան վաւերականութիւնը իրրե դաւանական սրբութիւն էք պաշտպանում՝ քննադանական եւ ազատամիտներ էք դարձել այժմ է, իրրե Հռուստարշի հարազատ զաւակներ, Հռուստարշի աեսիլը կեզծիք էք համարում հայոց եկեղեցւոյ աստուածահաստատ, Ս. Էջմիածնի Հայոց Մայր եկեղեցի, Միածնի իջման տեղ լինելուն չէք հաւատում: — Եւ մենք, Հայոց եկեղեցւոյ պաշտօնեաներս իրաւունք չունիք Զեր ունաճութիւններն երեան հանելու: ատելութիւն և թշնամութիւն սերմաննել է մեր ամենանուիրական պարտականութիւնը կատարելը՝ նորա, մեր խեղճ, որդեկորոյս, Քրիսից ու ներսից հալածուած Մօր՝ իրաւունքները պաշտպանելը: Կարող էք պարձենալ՝ էջմիածնական Հայեր էլ կան, որոնք այդ կարծիքին են: — Գեցէրին մենք յարգում ենք իրրե զիտնականի\* և յուսով ենք, որ առիթու կարողութիւն կունենանք պատմական փաստերով նորա տեսութեանց տկար կողմերը ցոյց տալու: բայց Զեր խղճում ենք իրրե Հայ մարդոց, իրրե նուրբ քաղաքագետների, ինչպէս և խղճում ենք այն բոլոր քաղաքագետներին, որոնք Հայոց աշխարհի ամբողջական զիւղեր անհովիւ և անպատապար մնացած տեսնելով — անհոգութեամբ հոգեւոր վարշութեան: (Խիղճ

չունիք կամ Աստարձուց չէք վախենում) — և օդնութեան աղաղակներ լսելով մեկնում են իրենց զթած եւ մարդասէր ծեռքերը թշուառ ժողովուրդի թշուառ մնացորդներին սիրոյ եւ միութեան կապերով կապելու այս կամ այն համայնքի հետ: Սակայն մեծ է Հուսաւորչ Աստուածը:

Կ. Վ.

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿԱՆ

ԿԱԹՈԼԻԿ ԾԽԸՆԹՅՈՒՆ

Պապական այն յանձնախումբը, որ պիտի քննէր անգլիկան եկեղեցու ձեռնադրութեան վաւերականութիւնը, հրատարակեց իւր ուսոււմնասիրութեան եղանացութիւնը, որով անվաւեր է հրոշակուում անգլիկան ձեռնադրութիւնը: Անգլիկան եկեղեցին կաթոլիկ եկեղեցու ծոցը կրկին յետ տանելու փորձն անյաջող անցաւ, հակառակ բարեկանաների ցանկութեան: կարծուում է, որ բացի լորդ Հալիֆաքսից և նրա սակաւամիւ հետևողներից, ոչ ոք այլես չէ հաւատում: որ մի օր անգլիկան եկեղեցին Հռոմին կը հպատակի: Քաղաքական մեծ թերթերն իրաւամբ նկատում են, որ այժմեան Անգլիան բազմաթիւ առաւելութիւններ է ձեռք բերել բողոքականութեան շնորհիւ, որից հրաժարուելն հաւասար պիտի լինի քաղաքակրթական այդ արգասիքներից հրաժարուելուն:

Քրանսի այս մ կառավարութեան և կղերականութեան կուրք շարունակուում է: Զընայելով արմատականների գոշին ու աղմուկին, որ ներկայ կառավարութիւնն կղերական են կոչում: Մելինի նախարարութիւնը խստութեամբ համար հալածում է կամուլիկներին: վերջերս հրապարակական թափունքներն անգամ արգելուեցան ֆրանսիայում: կաթոլիկ միաբանութիւնների վրայ գրուած հարկի մի երրորդն անգամ չէ ստացել կառավարութիւնն, 1 / միլիոն ֆրանկից 400,000 ֆր: Հազիւ են վճարուել ինքնակամ: մնացած ձեռք բերելու համար կառավարութիւնը աճուրդի է հանել մի քանի միաբանութիւններին պատկանող հնձերը: ըլ նայելով գրան էլլոյս ըլ կայ բոլոր հարկը ժողովելու:

Ցովհաննա Դ'Արքի արձանի բացումը տեղի ունեցաւ: վերջերս Խայմուում: այդ հանգիսին ներկայ էր և հասարակական առաջնորդներ և անդամներ առաջնորդների մասին միաբանութիւններին պատկանող հնձերը: ըլ նայելով գրան էլլոյս ըլ կայ բոլոր հարկը ժողովելու:

\* Թէ նա ինքն ինչ կարծիք ունի մեր մասին, որոնք այդ եւս իմացնել էք: